


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Եւրոպական կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ րապրի
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՐԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամներ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ՐԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարական վրայ է:

Խնայարարական ուղղուած
գրութիւնք է՝ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ Պատ. բաժնա-
նորդներէն ջերմասպէս կը խնդրուի որ բա-
րեհաճին նախորդ տարիէն մնացեալ պար-
տոց կցելով դրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ
Տարեցրջանի բաժնանորդագիրը, եւ նարկ
չը բողոյ մասնատու դիմումներու, որով
նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-
ԼՈՅՍԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան:

ՄԵՆՔ ՄԵԶՍՈՎ

Որչափ ալ մտքի և բարոյականի մասն-
կութեան մէջ հալ ու մաշ սպառողներէն
ոմանք — առ ի չգոյ է կարեւոր նիւթերու —
յանդգնին մեզ ակնաւորել թէ՛ մենք շատ
անգամ կ'ըզաղինք մեր որբերով, թէ՛ մենք՝
մեր էջերուն մէջ ընդարձակ տեղ կը նը-
ուիրենք որբոց պաշտպանութեան խնդրոյն,
մենք՝ դարձեալ առիթը ներկայացած ա-
տեն, չ'պիտի վարանինք այդ ամենակարե-
ւոր խնդրով զբաղելու:

Եթէ գմեղ մեղադրել ցանկացողները
գթացող ու զգայուն սիրտ մը չ'են կրեր
իրենց կուրծքին տակ, եթէ այդպիսիները
միմիայն իրենք իրենց չուրին տակ ապրե-
լու վարժուած են ու կ'ուզեն այնպէս մը-
նալ, ազատ կը ձգենք զիրենք՝ որ ուզած-
նին ընեն:

Մենք՝ մեր սրտի և զգացման թելադ-
րութիւնը ի գործ պիտի դնենք, ստէպ վեր-
յուշելով որբոց հարցը. հարց մը՝ որով ո՞ր-
չափ ալ զբաղինք, որուն համար ո՞րչափ նո-
րանոր միջոցներ պրպտենք և ո՞րչափ գը-
թատ սրտերու ուշադրութիւնը գէպ այն
հրաւիրելու ջանքեր ընենք, դարձեալ անբա-
ւական պիտի ըլլայ:

Նորանոր միջոցներ ու նորանոր սրբ-
տաճմիկ լուրեր թոյլ չ'են տար մեզ ան-
հոգ ու անտարբեր մնալ: Մեր որբոց շատ
ստուար մէկ մասը օտարներու ձեռքին մէջ և
օտարներու խնամոց տակ կը գտնուին. այդ
գառնազգեստ գայլերը՝ որչափ ալ որբախը-
նամ անուշին տակ քողարկուած ըլլան,
մենք պէտք է չ'ուշինք կատարեալ հաւատք
ընծայել անոնց ցոյց տուած հոգածութեան
և մանաւանդ ուղղամտութեան:

Առիթն է յիշել հանգուցեալ նարպէյ
Սրբազանի մէկ քանի տողերը, որոնք շատ
պերճախօս են և կ'արժէ որ արմատանան
մեր մտքին ու սրտին մէջ:

«Օտարը Ձեր վիշտ կը գիտէ անգորով»
«Ինչ փոյթ որ դուք թափէք արցունք
արիւնով»
«Ո՞վ որ հայ չ'է, հայուն ցաւերն ան
չ'ըզար»
«Ինչ կը խաբուիք անդադար»:

Բանաստեղծի մը գրելէն ելած ու բա-
նաստեղծական հովեր կրող բաւեր միայն
պէտք է ընդունիլ ասոնք, այլ իրողու-
թիւններու և փորձառութեան վրայ հիմ-
նուած սրտաշարժ և յուզիչ տողեր են:

Եթէ մենք չ'ուզենք օգտուիլ այս տո-
ղերէն, որոնք անցեալին վերաբերելով ի-
րենց ուժը կորսնցուցած են ըստ ոմանց,
առնենք այժմեութեան պատկանող կենդա-
նի օրինակներ և ասոնք թող յուզեն մեր
սրտերը:

Ահա թէ ի՞նչ կը կարդանք Արմէնիայի
վերջին թուոյն մէջ:

«Երուսաղէմէն կը գրեն թէ՛ այն տե-
ղի Գերմանական Որբանոցին մէջ պատասպար-
ուած հայ որբերը, շատ խղճալի վիճակի մը
մէջ ինկած են: Ո՛չ միայն անոնց անբաւա-
կան և անհամար անուշ մը տալով չարաչար
կ'աշխատցնեն, ո՛չ միայն խստիւ արգելած
են հայերէն լեզուի գործածութիւնը և Հա-
յաստանեաց եկեղեցւոյ հետ ո՛ր և է հաղոր-
դակցութիւն և երբեմն նոյն իսկ իրենց ծը-
նողներին հետ տեսակցութիւնը, այլ և՛ մա-
քուր և անարատ հայ որբերը քնացնել տա-
լով արտերով վարակուած քրիստոնեայ Ա-
րար տղաքներու քով, ասոնց հիւանդու-
թիւնները փոխանցուած են հայ որբերին,
որոնցմէ ոմանք ճաղատ դարձած են, ու-
մանք աչքի հիւանդութիւններով կը տառա-
պին և ամենքն ալ ընդհանրապէս աղտոտ,
նիհար և հիւանդոտ գէմք մը ստանալով
կերպարանախոխուած են»:

«Ինտոսթոցի մեծ մայր մը, որ այժմ
Երուսաղէմ կը գտնուի, ուզեր է յետ առ-
նել նոյն որբանոցին մէջ գտնուած իր ե-
րեք թոռները, որոնցմէ մին բոլորովին
ճաղատ դարձեր է արդէն, բայց որբանո-
ցին տեսչութիւնը մերժեր է անոր լիբա-
դարձուել իր թոռները, չ'նայելով կնոջ
աղէխարջ աղաչանքներին և նոյն իսկ Ամեն-
Թարութիւն Պատրիարքի յայտնած փափա-
քին»:

Ահաւասիկ օտարը, այն ալ՝ Պատրի-
արքի մը քթին տակ. ալ ի՞նչ կը մնայ
մեզ ընել. ձեռք ձեռք վրայ ծալլած
նստիլ, թէ մեր ջանքերը կրկնապատկել:

Իրաւ է, Թարութիւն Պատրիարքի մը
կուրծքին տակ եւր կրնայ մեռած ըլլալ.
նա խոնարհութեամբ պաշտօնեայ է (°) մեք:

այս տեսակէտով պէտք է չ'ուշինք անոր հե-
տեւելու:

Մեր ջանքերը պէտք է բազմապատ-
կենք, մերինները օտարներու ձեռք չ'ընող-
լու համար. այդ պայտիկներն են որ պիտի
ըլլան մեր ուպագայ ծաղկեալ նոր սերուն-
դը, եթէ թոյլ տանք որ անոնց մէջ մարի
և չքանայ ազգային զգացումը, հայրենասի-
րական ոգին և մայրենի լեզուի սէրը,
առ ի՞նչ այսչափ աղմուկ ու այսչափ իրա-
րանցում՝ զանազան դասակարգերու մէջ:

Իսկ ի՞նչ լսենք մեր մէջէն այն դա-
սակարգերուն ալ որոնք թրոնախալի առու-
մով և Ձինաստանի տուամներով կ'ըզաղին և
յաճախ պեղիկի կանանց սեզանին չուրլ ինք-
նատուացութեան մէջ կը թաւալին. ասոնք
կը մոռնան թէ՛ պէտք է որ քիչ անգամ
անոնցմով և ստէպ

մեծ մեզմով զբաղինք:

Ե.

ՀԻՆ ՀՆՈՅԷ ՄԸ ԴՈՒՐՊ ԺԱՅԹԻՈՂ ՍԻՐՍԹԻՆ
ԿԱՅԾԵՐ

Մինակ էի, եւ իմ կենաց անցելոյն մէջ
Մերուկ սրտիկս ուզեց ընել մի ելեւէջ.
Որտեղ իջաւ, բարձրին ելաւ սաւառնաթիւ,
ինչպէս հովէն աստ անդ վարին ամպեր թեթեւ.
Եւ թղթատեց յիշատակաց իւր հին մատան,
Յիշատակներ, որք զբոսանք են ծերութեան.
Եւ երբ այսպէս կայի հոգեով յանձնաւորուած,
Մէկէն ի մէկ կոյս մը տեսայ գէսն կայանած.
Ո՛ւրկէ եկաւ, եւ ո՞վ էր այն, չգիտէի
Հրեշտակ թէ մարդ, կամ երջանակց մի գիցուէի.
«Բարե՛ւ» ըսաւ, բայց տեսնէի որչափ գուարթ,
Ասանկ համով բարեւ չառի ես մինչեւ ցարդ.
Ծիծաղ, ժպիտ, կարծես երկրւ ջոր կոկոններ,
Նոյնժամ բացին բոսորապեղ իւր շրթուքներ.
Թէ մարդ անոր հայի տեսնէ, խելքը գլխէն
Կամ հրեշտակ կամ ստանայ կուզան կ'առնեն.
«Բարե՛ւ» ըսաւ, նազելաքայլ ինձ մօտ եկաւ.
Այս բարեւէն սիրտմ տաք տաք իղձեր լեցաւ,
«Իմ սիրելիս քեզ բարեւեմ սրտով անկեղծ»
Սիրտ՝ որ պահէ սիրոյդ պատկերը անտխեղծ»
Ըսաւ, լռեց, կարծես թէ հուր լեցաւ վրաս.
Բռնկեցայ ինչպէս հրդեհ մի վաղահաս.
Թէպէտ տեսայ վտանգն, այլ ո՛ւշ, փրկանք չկայ,
Ձի մի տկար որս բողբոջի ճանկը ինկայ.
— Ձանք մը ընեմ — ըսի մերժել սէրն ու բարեւ,
Գուցէ հնար ըլլայ վտանգն անցնել թեթեւ:

—Ո՛չ օրիորդ, չեմ հաւատար, սուտ ես ըսի,
—Ըսաւ թէ քեզ սուտ խօսելու ի՞նչ չան ինձի,
Գիտցի՛ր, այդ քո երկայն հասակ սիրեցի չա՛տ,
Եւ կ'ըզձանամ զիս քեզի հետ չափել ազատ»

—Ըսի հառակա է բարտիի նման շարժուն,
Որ խաղալիկ կ'ըլլայ ամեն փչող հովուն,
Ո՛հ սուտ ես, սուտ, եւ կամ կուզես ծաղրել ինձի:

—Ըստ ստեղծ, ու ծաղրել է ինչ շահ ինծի :
 Հաւատ՝ թէ երբ ձայնդ լսեմ, սիրտս բացուի,
 Ինձ թուի թէ երբոք ստեղծ մի ես վարդի : —
 —Սուտ կը խօսես, հարբուի կ'ըլլամ ամեն ատեն,
 Ձեռնդ ձայնիս համար շատերը դիտ կ'ատեն :
 Նոյն իսկ ձայնիս ես չեմ հաւնիր եւ ինչպէս գուն
 Պիտի հաւնիս, ու մուսայից կարգես դատուն :
 Սուտ կը խօսես, եւ կամ կուզես ծաղրել ինծի : —
 —Սուտ խօսելէ կամ ծաղրելէ ինչ շահ ինծի :
 Ներկայութիւնդ ինծի բերէ ծաղրի հոտեր
 Ինչպէս գարուն շնչէ զհիւրեւ անուշաբեր
 Երբ աշխոյժի կտրիճի պէս երթաս ու դաս :
 Դիւցազնական շուք կը ձգես կարծես վրաս : —
 —Ոչ Օրթոք, կը սխալիս ըսի. ծեր եմ,
 Գաւազանով երբոր քաշեմ, կը խարխալեմ,
 Ծունկս դողայ, սկստնս է խուլ, չեմ լսեր շատ,
 Կուզս անկած տուն կը դառնամ ես ճարահատ :
 Կը փոնքտամ ու կը հազամ միշտ բարձրաձայն,
 Ինչպէս ըսեմ ամէն կողմէս ձայնիս կ'ըլլան :
 Աղէկ նայէ՛, չունիմ գոնէ ձերք մը սիրուն
 Ոտք, ձեռք, գլուխ, ամեն անդամս է՝ երբուն :
 Սուտ կը խօսես, եւ կամ կուզես ծաղրել ինծի : —
 —Սուտ խօսելէ, կամ ծաղրելէ ինչ շահ ինծի : —
 Բան չմնաց ըսաւ, ու ես կարճ կապեցի,
 Ըսի — Այո՛, բոլոր խօսքերդ հաւատացի :
 Կամ դու խնդես, եւ կամ ես խնդ, որ ալ ըլլանք
 Օր մը շէնքով շնորհքով պիտի նստինք ու լանք :
 Հոգ չէ՛. թող քու ուղածդ ըլլայ, ծառայիմ քեզ
 Այս խօսքերը չ'ըլլայ մոռնաս ըսաւ, ըսես :

Պարտեալ է մարդ, երբ որ սիրոյ տուջի պահուն
 Զ'ըլլայ զգոյճ, եւ չունենայ խոհեմութիւն :
 Ծերուկ ծերուկ երիտասարդ աղջկան մը հետ
 Միմանով, գրեթէ՛ որչափ բերի աղէտ :
 Գոյքս գնաց, կեանքս ու պատիւս ամեն գնաց,
 Յիմարութեանս դառն յիշատակ միայն մնաց :
 Որ զգացման գերին է միշտ լացէք վրան,
 Թիւր զգացման տխուր վախճանն է գերեզման :
 Ս . Ծ .

ԿԵԱՆՔԻ ԱՐԴԱՐ ՊԱՅՔԱՐԸ

(Շարունակութիւն նախորդ թիւին եւ վերջ)

Ըստ իմ դատողութեան, լրագրի մը բոլորովին հանրութեան սեփականութիւնն ըլլալ պարտի, քանի որ մեծաւ մասամբ կանխիկ բաժանորդագրութիւններով ծախուած, եւ կամ օրերին վտանգուելու նախանձելի արտօնութեամբ բարեմասնեալ է : Այս տեսակ թերթ մը կատարելապէս անկողմնակալ, կարող ու վեհանձն վարիչներու ձեռաց մէջ գտնուելու է (*) :

Թ Ե Ր Թ Օ Ն

Ը .

Ի Ն Ջ Ո՞Ւ Զ Ե Ն Ք Յ Ա Ջ Ո Ղ Ի Ր

ՏԵՍԻՒ Ե .

ՆԻՍՏ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

(Շարունակութիւն նախորդ թիւին)

(Ժողովականները գրեթէ ամբողջութեամբ ներկայ էին) :
 Ատենապետ էֆ . ն ատենը բանալով Ատենադպրին հրամայեց կարգալ հետեւեալ նամակը, զոր յշած էր Ընդհանուր Ժողովոյ Դիւանն :
 Ատենադպրը յատենի ժողովոյ կարգաց հետեւեալը .
 Մեծապատիւ Տիար Ատենապետ
 Տնօրէն Ժողովոյ Դիւանի Հայոց Ի Գահիրէ
 Ստացանք Դիւանիդ կողմանէ զրկուած ընկերութեան վեցամսեայ հաշուեկշիռն եւ զայն համեմատելով նախորդ տարուայ հաշուեկշիռն՝ որուն հետ, ցաւ ի սիրտ կը յայտնենք թէ՛ ուղղակի եւ անուղղակի տրոց կամ հասութից մէջ 40 ոսկիի բաց մը կը նշմարուի, անցեալ վեցամսէի հաշուոց բաղդատմամբ :

Ամէն պարագայի մէջ ցոյց տրուած չափազանց անձնասիրութիւնը լաւ նկարագրի մը յատկանիշը չէ : Ո՛վ որ կուզէ օգտակար ըլլալ մարդկութեան, մոռնայու է իր անձը, եւ գործածելու է անձնուիրաբար իր բոլոր կարողութիւնները՝ հարստահարեալներու, տկարներու ի նպաստ : Նուիրական է այս օրինակ կոխմը . անձնագոհութիւն կայ հոն . . . եւ գիտակից գոհողութիւն մը իրաւամբ երկրպագելի է, ինչպէս Բրիտանոսները :

Դժբաղդաբար քիչեր կան որ կը հասկնան այս հոգեւորութիւնը, եւ կ'զգան անձնութեան իրենց անհրաժեշտ անհրաժեշտ անհրաժեշտ : Ծատերու յօրինուածին շղերը՝ որ հոգեւոյն հաղորդիչ շարժամասերն են, անզգայ դարձած են՝ ներկայիս մէջ, խայտառակ կենցաղավարութեամբ մը . անոնք սպասուում ծիւրած, մաշած են, եւ հետեւաբար՝ անընդունակ զգայուն գաղափարներու, եւ անփոյթ՝ յուզիչ տեսարաններու հանդէպ : Ո՛ր հանճարեղը պիտի կրնար կրօնակ թէ՛ վերջին դարը ջղազարտութեան դար պիտի յորդորուի : Մանաւանդ մենք, հայերս կը տառապինք այս ախտէն՝ յակամայս տխուր դէպքերու շատ աւելի ենթարկուած ըլլալով, եւ այժմ, կատարելապէս կը նմանինք արեւմտեալ ծովու մէջ խորտակուած ու խորատուգուած նաւի մը նաւորդներուն՝ որ մոռնող ալեաց հեղձուցիչ գրկին մէջ մաքառելու, եւ կեանքներին ազատելու դեռ անկարող, յիմարաբար կ'սկսին իրենց ընկերներէն ոմանց լողալ չ'գիտնալը հեզութեամբ մատնանիշ ընել այդ հոգեվարական աղեկէզ ու անաւոր ճգնաժամի վայրկեաններուն մէջ . . . :

Այլեւս բաւական է երկարել . խնդրը որքան քաջչենք, փոփոխենք եւ տարբեր տեսակէտներէ նկատենք, դարձեալ նոյն ճիւղատեսիլ ստուերը՝ այլասերած մարդը, « աննկարագիր արարածը » կ'անգնած կը տեսնենք մեր մէջ ու մեր առջեւ, որոյ գէ՛մ գիտակցութեամբ . ոգի ի բոլոր մարտնչելու է կարենալ շարունակելու համար յաւէտ կեանքը մարդուն մէջ : Ողջամիտ գաղափարներու, հրահանգիչ ճշմարիտ վարդապետութիւններու, եւ բարոյական սկզբունքներու տարածմամբ եւեթ հնար է ազնուացնել ու բարձրացնել անկեալ մարդը : Այս բաղձալի գաղափարին իրականացումը անձնագոհներու իրական խմբակի մը կազմակերպութեան կը կարօտի : Ամօթ է, ամօթ . . . : Ատենը չէ՛ աքլորի ծեծկըւււքներով, զրաբանութիւններով, ծածկամիտ առասպելներով, եւ սնայարձ գրական գիւտերով վայրապար զբաղեցնել խեղճ ժողովուրդը :

(*) Եթէ կանխիկ ստացուած հասոյթները թոյլ կուտան այդ բանին . Ծ . Խ .

Տէր Ատենապետ, թերեւս դուք ալ զայս նշմարած կը լինիք, հետեւաբար դիտել կուտանք, եւ կ'աղաչենք որ Պատ . Ժողովը ու թարութիւնը դարձնէ եւ ըստ այնմ կարգադրութիւն մը ընէ ընդհանուր Դիւանի հետ խորհրդակցութեամբ : Որպէսզի ընկերութեան սպագան կարելի ըլլայ փրկել այս անակնկալ փորձանքէն : Տէ՛ր, ըստ ամենայնի վստահ լինելով՝ որ ընկերութեան պատիւը բարձր պահելու նախանձախնդիր էք եւ չէք խնայեր ձեր ջանքերն՝ կանխաւ կը նուիրենք մեր յարգանքներն :

Ստորագրեալ
 ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԴՂ . ԺՈՂՈՎՈՅ
 ԱՏԵՆԱՊԵՏ . — Ժողովոյ լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրեմ, որպէսզի հարկ եղած պատասխանը գրուելու համար, ընէ՛ ինչ որ պէտք է :
 ՕՏԱՇՂԵԱՆ . — Դիտել կուտայ թէ՛ ինչպէս կարելի է որ 40 ոսկիի բաց մը եղած լինի, քանի որ հաշուեկշիռն մէջ այդպիսի պակասութիւն մը գոյութիւն չունէր, կամ գոնէ մենք տեսած չենք :
 ԹԱԹՕԵԱՆ . — Ես արդէն ընկերութեան գոյութեան սկսեալ ընկերութեան տեսարաններէն բան մը հասկցած չեմ . շատ անգամ ալ Գահնապար ըլլալով հանդերձ . . . :
 ԲԱՄՊԱԿԵԱՆ . — Այս պակասը համեմատական հաշիւէ արտադրուած է եւ որչափ որ ալ հաշուեկշիռն մէջ նշանակուած չէ . բայց միեւ-

զուրքը : Մտաւորական դատարկութիւնը՝ պղծալի խճողութիւն գերադաս, եւ առ այդ զգալի եղած սառնապանքը՝ խեղաբերութեան հորատոյն աղբակն է : Ուրեմն, անդադար զիրար բզըքտելու, եւ իրարու սիրտ վիրաւորելու տեղ՝ գիտնա՛նք գործածել թանկագին ու սրբալաւ ժամանակը՝ մեր այս համբակ ու տառապալից օրերուն մէջ, որոյ ընդ վայր սպանուած՝ կեանքի սրբապղծումն է : Գիտական ոսկեղինիկ գարուն մէջ, լուսաւորութեան ու զարգացման բաղձացող երիտասարդութեան ծարաւի գլուխը մեր երկարապատում գրուածներով չը ցաւեցնենք, քիչ մը վերջը վշտաբեկ, բացազանչելու համար թէ՛ « ժողովուրդը դրամը ու՛ր աւալը չ'գիտեր » : Ալ հերթ'ք է քրթնաթոր աշխատանքով ձեռք բերուած դրամը վատնել, կեղծաւորութեան պատառատուն քողը գիտակցօրէն հիւսելու համար, ի վնաս նոր սերնդեան : Ինքնասպանութեան այս մոլար ու անել ուղիէն՝ սխալփելով, վերջնականապէս հեռանանք, սիրելի ընթերցողներ, Այս աննպատակ ու թմրած վիճակը անտանելի, մահացու է : Ատելու թեան ու վրէժխնդրութեան չար ոգին մեր մէջէն վտարելով, սիրողաբար եւ անխորթէն ձեռք կարկանդակ ու օգնենք մեր ուժերուն պէտք ունեցողներուն : Սիրով ու միասնութեամբ նկատի առնելով՝ տեղուց գաղթական ժողովուրդին մտաւոր եւ բարոյական զարգացման գլխաւոր ու անհրաժեշտ պէտքը համարուած լրագրութեան արդի տարածման կացութիւնը, աշխատինք, յարատեւ անկեղծութեամբ, անոր բարելաւման Սոյն մտածուած եթէ ոչ . . . փարթեմ, գէթ ամեն միջակ դասակարգի պատկանող անհատի, ամեն լրջամիտ հայու պարտականութիւնն ըլլալ պարտի, այս տարագնաց օրերուն մէջ :

Ահա՛ այս է կեանքի վստահ՝ այլ վաստակաբեկ ու չ'ժնդակ պայքարը, զոր մղելու են, անխոնջաբար, արիասիրտ, անձնուրաց, եւ տրամաբանութեամբ կեանքի բնական (չէ թէ շինծաւ), համեստ, պարզ օրէնքներուն եւ կենսատու կանոններուն հիմնապէս փարոզ ու անսայթաք հետեւող ճշմարիտ մարտիկները :
 Կ . Գ . Ո .

Գահիրէ 29 Նոյեմբ . 1900

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 19 Դեկտ . — Կ'իմացուի թէ՛ Գար մտնող Պօէրները երկու գունդի բաժնուած են, որոնց մին Ֆիլիպթաուսի վրայ կը քալէ, իսկ միւսը Գրեթտօքի վրայ :

Նոյն ժամանակ պիւստէն բաց է, ասոր համար կ'առաջարկեմ օր մը որոշել եւ Ընդհ . Դիւանին հետ խորհրդակցութիւն մը կատարել չարիքին առջեւը առնելու համար :
 ՇԱԹՕԵԱՆ . — Անոնք տարեկան հաշիւը թող համեմատեն . հիմակուելիմայ խորհրդակցութեան տեղի չկայ :
 ԱՏԵՆԱՊԵՏ . — Այո՛, այո՛ իրաւունք ունի պարոն Շաթօեանը . անոնք տարեկան հաշիւը թող համեմատեն . յառաջիկայ վեցամսեան թատրոնի սեզոն է : Մենք մեր սովորական ներկայացումով կրնանք գերազանց արդիւնք մը ձեռք բերել, արդիւնք մը որ ներկայ եւ սպագայ սերնդեան բերնին ջուրերը կրնայ վազցնել :
 ՕՏԱՇՂԵԱՆ . — Այո՛, այո՛, ներկայացում . կեցցէ՛ Պարոն Շաթօեան :
 ԹԱԹՕԵԱՆ . — Կրթութիւնս բարձր լինելով, հազիւ կրցայ հասկնալ, որ ըսել է թէ՛ ինչպէս որ ներքին Տնօրէնները ամառուան սառի յաւելեալ ծախք մը ունին, մենք ալ ձմեռուան մէջ յաւելեալ թատրոնի հաշիւ մը ունինք . . . :
 ՇԱԹՕԵԱՆ . — Թատրոնի ժամանակ չէ . ինչպէս ըսի, անոնք տարեկան հաշիւները թող նային :
 ՕՏԱՇՂԵԱՆ . — Ինչպէս ժամանակ չէ . ես կ'առաջարկեմ մեծ մարդիկներէ մասնախումբ մը կազմել այս տարուան ներկայացումը փառաւոր ընելու համար :

Լորտ Գիշեր Գարի արշաւանքին վրայ լուսութիւն կը պահէ : Զորավար Նօքսի զօրքերէն մաս մը Տը Ուէթը հալածելը ձգած է, Գարի արշաւանքին առաջը առնելու համար :

Տը Լարէյին գունդերը զօրավար Քլէմէնթիսի բանակետողին քովերն են, կը կարծուի թէ կռիւ մը մտաւորուտ է :

« Գաթալօնիա » նաւը 642 գերիներով Տիւրքաւանէն Սէյլան մեկնած է :

Ամսթէրտամ 19 Դեկտ. — Նախագահ Քրի. Կէր քաղաքատունին մէջ իրեն ուղղուած ճառարտութեանց պատասխանելով սպայէն ըսած է. « Վստահութիւնս աւելի Աստուծոյ վրայ դրած եմ քան թէ երկրիս ինքնակաշնորհուն վրայ. սուտ են այն լուրերը թէ ես փախստական եմ, լմ կառավարութիւնս զիս արտասահման ղրկած է այս բարբարոս պատերազմին վերջ մը դրնել ջանալու համար :

Քէյթթաւան 18 Դեկտ. — Քէյթթաւան զուծին կառավարութիւնը լուր առած է որ 700 Պօէր Ալիվալ Նայթհէն Գար մտած է Գարտաֆ Սթէյլըն հասած են :

Լոնտոն 18 Դեկտ. — Պօէրները ամսոյս 15 ին չաբաթ օրը Գար մտած են Օրանս գետը անցնելէ յետոյ : Ճամբան հանդիպած են Քէյթթաւան Մաունթը Ռայֆէլի մէկ քանի շոկատներուն և զօրավար Պրէյպէնթի հեծելազուններին, որք կորուստով ետ քաշուած են :

Կը կարծուի թէ Գար մտնող Պօէրներուն հրամանատարը Հէրցօք զօրավարն է :

Նովեմբերի տարի տեւողի վրայ նոր լուրեր կը հասնին : Նօթուամպէրանտ Տիւրքիւրսի անձնատուր ըլլալէն յետոյ զօրավար Քլէմէնթիս միայն 600 հոգով մնացած, ստիպուեալ է 20 մղոն հեռավորութեան տակ նահանջելու, միշտ յաղթական թշնամոյն կրակին տակ, որք իրեն վայրկեան մը զաղար չեն տուեր : Պաշարատար խումբերը ճարպիկութեամբ և քաջութեամբ կատարած են իրենց պարտականութիւնը պաշարաբարձ կառքերու պաշտպանութեամբ, գնդապետ Լէկիէ մեռնելէ առաջ հինգ թշնամի զարկած է :

Լոնտոն 17 Դեկտ. — Տը Ուէթ Անգլիական գծերէն անցած առնել մեր գրաւած Թապանչուի դիրքին վրայ երեք անգամ յարձակում ըրաւ : Յարձակումները անձամբ կը վարէր. Պօէր զօրավարը յաջողեցաւ իր Գոմմանտօները անցնելու, Թապանչուի դիրքին զանազան կէտերուն վրայ միահողոյն յարձակելով :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵԿԻՊՏՈՍԻ Առաջնորդը վերջապէս յաջողած է Պօլէն մեկնել :

Կ'ըսեն թէ կիրակի օրը Աղէքսանդրիա պիտի հասնի :

Մաղթենք որ Առաջնորդի ներկայութիւնը վերջ տայ կարգ մը խնդիրներու, որոնք անոր գալստեանը համար յետաձգուած են :

ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. — Այս անունով ընկերութիւն մը, որ Թիֆլիզի մէջ գոյութիւն ունէր, երկար տարիներէ ի վեր շատ մը օգտակար ծառայութիւններ կը մատուցանէր Հայ ազգին :

Բոլոր Հայ թերթերը, վերջերս ցաւօք արտի գուժեցին Թիֆլիզի Հրատարակչական Ընկերութեան փակումը :

Այդպիսի ընկերութեան մը գոյութեան առաւելութիւններուն վրայ մտածողներ շատ եղան բարեբաղդաբար, և մէկ քանի ազգայնոց կողմէ (Արշալոյս) Տնօրինութեան եղած առաջարկը ընդունելութիւն գտնելով նմանօրինակ ընկերութեան մը հիմնարկէք պիտի լինի առաջիկայ 1901 Յունուար 1 էն սկսեալ : Կը յուսանք թէ մեր Պատ. ազգայինք նկատի ունենալով Եգիպտոսի նման ազատ միջավայրի մը ընծայելիք դիւրութիւնները, պիտի փութան քաջալերել այսպիսի օգտաշատ ձեռնարկ մը :

Բաժանորդագրուել փափաքողք կրնան իրենց անունը արձանագրել տալու համար դիմել « Արշալոյս » խմբագրատունը :

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ. — Մօտաւորապէս պիտի սկսինք հրատարակութիւնը Ազգ. Մահմանագրութեան տետրին, որը շատ հազ-

ուագիւտ է այժմ և Պօլսոյ մէջ շատ մը պատճառներով նոր տպագրութիւնը անկարելի է : Սոյն տետրի տպագրութեանէն գոյացած հասոյթը պիտի յատկացուի Նորակազմ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 21 ԴԵՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 1770, 8691, 5509, 5819, 7818, 2301; 4696, 7847, 6470, 7019, 7901, 2896; 7475, 4420, 8924, 8972, 8827, 2493; 7590, 9063, 569, 8108, 3429, 9123; 7042, 1043, 3102

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՌՕՊԷՆՍՕՆԻ նմանիլ ուղեւը շատ անգամներ սուղի կը նստի : Սան Տրանսիսկօէն Պ. Ճէյմս Հօլ բերնին համը առած է շատ գծնդակ պարագաներու տակ :

Ամբողջ 67ր օր Ալաքսի լեռներուն մէջ թափառած է միայն մէկ լիպրա խոզաճարպ, 5 պաքցամատ ունենալով, որոնց վրայ աւելցուցեր է վայրի պտուղներ և արմատներ զորոհաւաքած է լեռներու մէջ : Սեպ. 22 ին մէկ քանի որսորդներ զայն գտած են Ամբրիկեան գետակին մօտ բոլորովին կիսամեռ վիճակի մէջ, վրան գոց ուռի մը տակ պառկած : Հարկաւ գժբաղդ Ռօպէնսօնը երգուած է — թէպէտե քիչ մը ուշանգամ մ'ալ ատանկ Ռօպէնսօնաւորութիւն չ'ունենալու :

ԻՏԱԼԱԿԱՆ կառավարութիւնը 200,000 Ֆրանք կը խօստանայ այն մարդուն որ կարենայ ողջ կամ մեռած բռնել հռչակաւոր Գալապրիացի աւազակապետ Մուսօլեմօն :

Մարդ չ'գիտեր հիմա աւազակապետին ուր գտնուիլը և չ'են ալ կարծեր որ Գալապրիայի լեռները ապաստանած ըլլայ : ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՄԱՀՄԷՏԱԿԱՆ ՁԻՆԱՅԻՆԵՐԸ. — Կ. Պօլէն Մանչեսթըր Կուարտերնի կը գրեն թէ Պալատին մէջ Իւլեմաներէ բազկացած արտասովոր պատուիրակութիւն մը

ՇԱԹՕԵԱՆ. — Թատրոն, ներկայացում պօշ բաներ են, այս տարի ներկայացում տալու գաղափարը չունիմ ես :

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ես ալ այդպէս կը տեսնամ որ ներկայացումը շատ անցած քան մը կը լինի :

ՇԱԹՕԵԱՆ. — Դո՛ւք, դո՛ւք ժողովրդի մէջ բան մը չէք տեսնար, ես որ ներկայացման այնչափ յոգնութիւններու մէջ, բեմի վրայ իբր թագաւոր, երբ Հայաստանը նախարներու մէջ կը բաժնէի յափշտակած գահս հաստատելու համար, այդ բարձունքէն ի՞նչ տեսնամ. ամբողջ պիտուառները եւ առաջին կարգի օթեակներն պարապ էին. երկրորդ կարգի օթեակներն ալ եթէ ըսես քանի մը գաւառացիի դէմքով ընտանիքներ կծկուած էին, աւելի սքողուած քան թէ Տեֆօրթի. թիկնաթոռներն ալ գըրաւուած էին ամբողջ կսկաք քախքի հայերով եւ Ալիարանի աշայով, այնպէս որ ընկերութեան սրճարանը կը ներկայացնէր. հասա վերնատան փոճօրը. ասիկա բնաւ չեմ մտնար : Այն պահուն եթէ օտարական մը հոն մտած լինէ՛ր, վա՛յ ինձ. վա՛յ ինձ. ինչ ընեմ որ թատրոնը արդիւնաւոր եղած է. քիչ մ'ալ Արսը պէտք է, սանկ շի՛ր բաներ ալ ըլլալու են... :

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ինչպէս ըսի, ես ալ ներկայացում տալու գաղափար չունեմ, բայց վերջապէս այս հաշուեկշիռը կշռելու համար բան մը ընելու պէտքը կայ :

ԹԱԹՕԵԱՆ. — Պարզեւաւոր վիճակահանութիւն մը կազմակերպեմք :

ՇԱԹՕԵԱՆ. — Պայտի բան. ի՞նչ արդիւնք կրնաս ձեռք բերել. շատ շատ 40 կամ 50 ոսկի... անկէ անդէն... :

ԱՄԵՐԻԿԵԱՆ. — Վերջապէս այն ալ բան մըն է. չըլլալէն աղէկ է :

ՇԱԹՕԵԱՆ. — Ձէ՛, չըլլար, մեծ բան մը ընել պէտք է... :

ՕՏԱՇԳԵԱՆ. — Նուագահանդէս մը պատրաստեմք ուրեմն :

ՇԱԹՕԵԱՆ. — Ո՛ւր պիտի պատրաստես. չէ՛ մի որ թատրոնը կրկին չըլլար, շատ մեծ բան մը ընել պէտք է :

ԹԱԹՕԵԱՆ. — Ան չէ՛, միւսը չէ՛, ես ի՞նչ կուզես :

ԲԱՄՊԱԿԵԱՆ. — Անպատճառ նա բան մը պատրաստած ունի, որ ամէնքը չ'ըլլարով կը մկրտէ... :

ԹԱԹՕԵԱՆ. — Անցեալ տարի երբոր թատրոնը Հիւսիսային շոգեկառքով բերաւ, հաւատքըս մեծ է, որ այս տարի ալ Հարաւային ձեւերն իրար շատ մեծ բան մը պիտի բերէ :

ՇԱԹՕԵԱՆ Ափերիս պէ՛, ի՞նչպէս ալ գիտցար, միթէ խօսած եմ ձեզի... :

ԹԱԹՕԵԱՆ. — Ո՛չ, անցեալ ամիսներ երբ Գուպպէ երթալով ներկայացում կը պատրաստէիր... այս անգամ ալ Հէլլան կերթաս կու-

զաս, ուստի ես ալ կ'ենթադրեմ որ ընկերութեան սիրոյն եւ շահուն համար եղած ըլլայ... :

ՇԱԹՕԵԱՆ. — Թէեւ շողակրատութիւն, սակայն մատր բուն իսկ վերջին վրայ կը գնես. որովհետեւ այս մասին պէտք եղած յատակագիծի անգամ պատրաստուած է. մէկ բան մը կը պակսէր այն ալ Աստուած յաջողուց :

ԹԱԹՕԵԱՆ. — Բանը այն է որ Աստուած յաջողուցէ եւ օա հաշուեկշիռի համեմատական աղտերութիւնները մէջ տեղէն վերնան... :

ՕՏԱՇԳԵԱՆ. — Մենք կը գործենք, Աստուած ալ կը յաջողուցէ :

ԲԱՄՊԱԿԵԱՆ. — Այո՛, ամեն ջանքերնիս ի գործ պիտի դնենք :

ԱՄԵՐԻԿԵԱՆ. — Այդ ի՞նչ յատակագիծ է որ խօսքի նիւթ եղած է. երեւի Աստուածային հրաշք մը ըլլալու է որ մենք չենք գիտեր :

ԹԱԹՕԵԱՆ. — Կ'աղաչենք, յատակագիծը մեզի ցոյց տուր :

ՇԱԹՕԵԱՆ. — Յատակագիծը Հասարակաց Շինութեան նախարարութեանը ղրկած եմ, խնդրելով որ նշանակեն թէ Հէլլանի Գահիրէէն քանի՞ ոտք բարձրութիւն ունի :

ԹԱԹՕԵԱՆ. — Առակներս՝ կը խօսիս մեզի հետ :

ՇԱԹՕԵԱՆ. — Ի՞նչ առակ, պէ՛ հերիք. ըս խելքդ այսպիսի բաներու ի՞նչ կը հասնի : (Շարունակելի)

Չինաստան զրկելու ծրագիրը կը քննուի, որը նպատակ պիտի ունենայ Չինացի մահ-մէտականներուն խաղաղութիւնը քարոզել և անոնց ու խաղիֆային յարաբերութեան կապերը սեղմել: Կ'ըսուի թէ այս գաղափարը ձագում առած է մեծ պետութեանց մէկէն որն որ թեւադրած ըլլայ Սուլթանին, իբր խաղիֆա իր ազդեցութիւնը բանեցնելու Չինացի մահմէտականներուն վրայ որոնց թիւը 20 միլիոնի կը հասնի: Ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ այս խորհուրդը թեւադրուած է Սուլթանին կրօնական խորհրդատու Շէյխ Ապուլ Հօտայէն: Ապուլ Հօտա կ'ըսէ թէ՛ Իւլէմաները Չինաստան պիտի զրկուին Խաղիֆային գերիվերութիւնը քարոզելու և Սուլթանը իրենց կրօնապետը ճանչնալու համար Բրօքալանտ ընելու:

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՏԻԿԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապսխալ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապսխալ Ազիզ, Այի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց, Անմէտ պէյ Ապսխալ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արգէն ծանօթ ըլլալով գահիրէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ ազքատներուն համար ձրի դարմանում:

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԲՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով արհեստին ամեն նորութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին գիմացը, նորաշէն խանութնուրուն մէջ:

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի դո՛ս պիտի մնան, արհեստի նորութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ դանելով, եւ մաշաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով:

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՄԻ՛ ի նիքէլ, կոթէն լարեղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տրեալ է նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացոյցի 120 ՂԲԵ է սկսեալ մինչև 2500 ՂԲԵ, Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնուլի բոլոր մազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան միօնօկորաֆներու:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պաշարի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱԿԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԻՐ ներս են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 հ աւելի վիսյակներով եւ միսայլներով վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանկիսին մէջ ստացած է:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ-ԿԱՅՄԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻՔԻՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԻՐ ի յաճախելին:



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԻՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն էին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԱՐՇԱԼՈՅՍԻ՞

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՔԸ

Օտանիյի դերասանին դիմացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երգարտարաններ, Գիրքեր, Հրատարակարտեր, Մանկագրքեր, Տեղեկագիրքեր, Կանոնագիրքեր, Տոմարներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԻՄԱՐ ՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արգէն խօսուած է Արշալոյսի մէջ:

2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիւտած է եղեր:

3. ՀԱՌԱՔԱՅԻՆՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի:

4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Ա Ձ Դ

Եզրպատանակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով այժմ Եզրպատանի համար Արևելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտաւեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, դիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով:

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ. վարժարանն ի Տարապէլ-Կիւնէնա:

Ա. ՊԱԼԵԱՆ

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գողթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՍԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահերէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գաւձէ:

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Ազգ. քանդակարտ: